ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

ՍԵՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

«ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՊՈՒՄ /ԹԵՈԴՈՐ ԴՐԱՅԶԵՐ, ՄԱՐԻՈ ՊՅՈՒԶՈ, ՀԱՐՐԻ ԳՐԵՅ/ » Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

ՍԵՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՊՈՒՄ /ԹԵՈԴՈՐ ԴՐԱՅԶԵՐ, ՄԱՐԻՈ ՊՅՈՒԶՈ, ՀԱՐՐԻ ԳՐԵՅ/» թեմայով ատենախոսությունը գալիս է հավաստելու 20-րդ դարի ամերիկյան վեպում ի հայտ եկած զարգացումները, որտեղ բացահայտվում են հասարակության մեջ առկա բարոյաիրավական նորմերը, հոգեբանական այն գործոնները, որոնք իրենց ազդեցությունն են թողել 20-րդ դարի ամերիկյան վեպի կերպարների բարոյահոգեբանական խառնվածքի վրա: Մանրամասնորեն ներկայացվում են նաև դեռևս վաղնջական ժամանակներից դատաիրավական համակարգի դրույթները, հունահռոմեական և անգլիական մշակույթներում առավել տարածված օրենքները, աստվածաշնչյան պատգամները և տասը պատվիրանները, հոգեբանական տեսությունները, հոգեվերլուծաբանների դրույթները:

Ավելորդ չէ նշել, որ ներկայումս միջգիտակարգային ուսումնասիրությունները գնալով ավելի լայն ընդգրկում են ստանում, ներառելով պատմության, մշակույթի, իրավունքի և ընդհանրապես, մարդու գործունեության տարբեր ոլորտներ: Պատճառը մեկն է, և սա հասկանալի է՝ մարդկության ողջ պատմությունը և քաղաքակրթությունը թելադրում են, որ անձի ինքնության և ինքնարտահայտման բոլոր ոլորտները փոխկապակցված են և բխում են մեկը մյուսից: Այս իմաստով է, որ Սերինե Պետրոսյանի հետազոտությունը որոշակի ճանաչողական արժեք ունի:

Թեմայի **նորույթը** պայմանավորված է այն հանգամանքով, որ մեզանում առաջին անգամ գրական երկերի համեմատության միջոցով վեր են հանվում այն

դրդապատճառները, որոնք կարող են գրական հերոսին մղել հանցագործության, ներկայացվում են հանցանքների քրեաիրավական և բարոյահոգեբանական հիմքերը՝ պայմանավորելով ուսումնասիրության **նպատակը**:

Նպատակի, հայեցակարգային շրջանակի և քննության նյութի սահմանումից հետո Ս. Պետրոսյանը ներկայացնում է իր լուծելիք խնդիրները, որոնք միաժամանակ ներկայանում են որպես գործողության պլան և ատենախոսության կառուցվածք: 148 էջ կազմող շարադրանքում տարանջատված են նշված խնդիրներով պայմանավորված երեք գլուխներ, եզրակացություն, գրականության ցանկ և հավելված: Ատենախոսության նյութը վերլուծության է ենթարկված մի շարք մեթոդներով, որոնց ընտրությունը բխում է նախ հետազոտության նպատակից, ապա և նյութի բնույթից: Կիրառվել են պատմահամեմատական, զուգադրական վերլուծության մեթոդներ: Ուսումնասիրությունն իրականացվել է նաև իրավագիտական և հոգեբանական դիտարկումների տեսանկյունից:

Աշխատանքի առավելություններից է սակավ անդրադարձ ունեցող, հայ ընթերցողին առաջին անգամ ներկայացվող գրողների ստեղծագործության հետ ծանոթությունը, և նրանց վեպերի ներմուծումը գիտական ուսումնասիրությունների շրջանակ: Սույն ուսումնասիրությունն **արդիական է,** քանի որ թեմաները, որոնք արծարծված են, ի մասնավորի՝ գրողների ստեղծագործություններում բարոյաիրավական պատասխանատվության և ազատության մոտիվների քննությունը, չեն կորցրել իրենց կարևորությունը մինչ օրս: Ժամանակավրեպ չէ նաև գեղարվեստական գրականության և օրենքի դրույթների միաձուլման փորձը, երբ ուսումնասիրվում է դատական իրավիճակներում մարդկանց հոգեվիճակները, վարքագծային դրսևորումները և դրանց առկայացումը գրական երկերում: Այս բոլոր հիմնահարցերը ներկայացված են **Թեոդոր Դրայզերի, Մարիո Պյուզոյի, Հարրի Գրեյի վեպերում**, և դրանց ուսումնասիրությունը, հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել վերը նշված թեմաներին նվիրված գրականագիտական հետագա ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության առաջին՝ **«Դատաիրավական համակարգի զարգացման պատմական փուլերն ու աղերսները անգլո-ամերիկյան գրականության համատեքստում»** գլխում ատենախոսի ուշադրության կենտրոնում են հունահռոմեական տասներկու օրենքները, աստծվաշնչյան պատվիրանները, Անգլիայի Արթուր թագավորի ժամանակաշրջանի ապետական օրենքները, մի շարք իրավաբանների տեսություններ և այլն:

Ատենախոսության երկրորդ **«Բարոյաիրավական համակարգի առկայացման այլակերպ դրսևորումը 20-րդ դարի անգլո-ամերիկյան գրականության քրեական և գանգստերական վեպերում (առաջացման պատճառները, պատմական իրողությունները, հետագա ընթացքը)» գ**լուխը ըստ էության, նախորդ գլխի տրամաբանական շարունակությունն է: Ներկայացվում են իտալական **«Կոզա Նոստրա»** և հրեական **«Կոշեր Նոստրա»** հանցավոր խմբավորումների օրենքների ամրապնդման, իտալական օմերտայի՝ լուռ մնալու, և հրեական կոշերների՝ չափավորության և համակերպվածության օրենքները և այդ համատեքստում՝ երեք կերպարների համեմատական բնութագիրը:

Հատկապես հաջողված է ատենախոսության երրորդ գլուխը, որը ներկայացնում է վարքագծային հոգեբանական տեսությունների և իրավական համակարգում դրանցից բխող օրենքների ազդեցությունները «Ամերիկյան ողբերգություն», «Ավազակները», և «Կնքահայրը» վեպերում: Ատենախոսության հեղինակի նպատակն է բացահայտել հանցագործների ներաշխարհը և արտաքին գործոնների ազդեցությունը նրանց՝ որպես հանցագործ «կայացման» գործում: Այստեղ ատենախոսության հեղինակի խնդիրը նաև հերոսների ներքին բարդույթները ներկայացնելն է, որը պայմանավորված է ոչ միայն արտաքին միջավայրի հետ հարաբերություններով, այլև ներքին, անձնային խնդիրներով: Թեպետ երրորդ գլուխը կազմում է ողջ ատենախոսության ընդամենը 27 էջը /էջ 94-121/, այս հատվածի վերլուծությունները շահեկանորեն առանձնանում են:

Ատենախոսության առավելություններից է ուսումնասիրության նպատակի, նորույթի, արդիականության հստակ ձևակերպումը:

Գովելի է նաև, որ ատենախոսության հեղինակը չափազանց մանրակրկիտ կերպով Հավելված բաժնում ներկայացնում է կրիմինալիստական ժանրի վեպի տեսակները՝ դետեկտիվ վեպ, պատմական դետեկտիվ, ամերիկյան նուար, իրավաբանական թրիլլեր և այլն (տե՛ս *Հավելված*, էջ 137-144): Թեպետ Ս. Պետրոսյանը ատենախոսության 64-րդ էջում հպանցիկ անդրադարձ է կատարում գանգստերական վեպին, կարծում եմ, ուսումնասիրությունն առավել կշահեր, եթե ատենախոսության համապատասխան գլուխներում ներկայացվեր ուսումնասիրության առարկա վեպերի ժանրային առանձնահատկությունների համեմատությունը և այդ ժանրերի առանձնահատկություններով պայմանավորված այն որոշիչ հատկանիշները, որոնք ազդել են վեպերի կերպարային համակարգի վրա:

Ատենախոսության *Եզրակացություն* բաժնում ներկայացված են այն հիմնական

դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Այդուհանդերձ, ՍԵՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել գիտական հետագա գործունեության ընթացքում:

Մասնավորապես՝

1. Միանգամայն հասկանալի է, որ ատենախոսը բարոյաիրավական, հոգեբանական, դատաիրավական հիմնահարցերի վերլուծությունը համարում է տեսամեթոդական այն հիմքը, որի վրա կատարել է երեք հեղինակների վեպերի վերլուծությունը: Նա արդարացիորեն մեջ է բերում իրավագիտության դոկտոր, ամերիկացի Ռոբերտ Վեիսբերգի և գերմանացի իրավագետ Ֆրից Շուլցի տեսությունները գրականագիտության և իրավագիտության համագործակցության վերաբերյալ (տե՛ս Ատենախոսություն, էջ 12, 44) և ամերիկացի իրավագետ Բենջամին Կարդոզոյի այն մտայնությունը, որ իրավունքը ծագում է գրականությունից (տե՛ս Ատենախոսություն, էջ 59-60): Սակայն կարծում եմ, այստեղ տեղին է նշել մի դիտարկում՝ թեման հաճախ է հետազոտողին գայթակղում շեղվել և անդրադառնալ թեմային հարակից հարցերին ավելի մեծ ջանասիրությամբ, քան պահանջվում է: Դատաիրավական համակարգին, վաղնջական ժամանակներց մինչև օրերս գործող օրենքներին և այլ հարակից թեմաներին նման մանրամասնությամբ և քանակությամբ անդրադառնալու փոխարեն, կարելի էր հասարակության թելադրած տարբեր նորմերի, այդ թվում բարոյական և դատաիրավական, համեմատության, գրական հերոսների հանցավոր արարքների դրդապատճառների մասին մանամասն վերլուծությունների միջոցով և տեքստային մեջբերումների և օրինակների համեմումով առավել տեսանելի դարձնել դիտարկվող նյութը: Այս ամենին անդրադարձ կա ատենախոսության 48-54, 70-93, 115-116 էջերում, որը կարելի էր ավելի զարգացնել:
2. Ցանկալի կլիներ համեմատել նաև երեք միագամայն տարբեր հեղինակների պոետիկան և գեղագիտությունը, պատկերային համակարգը՝ գրականագիտական վերլուծության առավել հստակ պատկեր ունենալու համար:
3. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում են ընդհանրական եզրահանգումներ, կրկնվող մտքեր, հայերեն անհարթ շարադրանք, թերևս այլ լեզուներից ոչ հստակ

թարգմանություններ (էջ 3, 6, 11, 14, 19, 25, 95-96, 98, 101, 103), որոնք զուտ խմբագրական խնդիր են:

Վերը նշվածը չի նսեմացնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքը, և նշված թերությունները չեն նվազեցնում ատենախոսի կատարած աշխատանքի գիտական և գործնական արժեքը: Ավելին, դրանք մատնանշում են թեմայի ընդլայման և ավելի խորը քննության հնարավորություն, որից, հուսանք, հետագայում կօգտվի հեղինակը:

Սեղմագրում ներկայացված դրույթները և տպագիր աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Այսպիսով, ՍԵՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՊՈՒՄ /ԹԵՈԴՈՐ ԴՐԱՅԶԵՐ, ՄԱՐԻՈ ՊՅՈՒԶՈ, ՀԱՐՐԻ ԳՐԵՅ/» թեմայով ատենախոսությունը ընդգրկուն ուսումնասիրություն է և բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Վերը նշվածը հնարավորություն է տալիս միջնորդել Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի՝ 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդին՝ **ՍԵՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՄՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԵՊՈՒՄ /ԹԵՈԴՈՐ ԴՐԱՅԶԵՐ, ՄԱՐԻՈ ՊՅՈՒԶՈ, ՀԱՐՐԻ ԳՐԵՅ/»** թեմայով ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Գայանե Եղիազարյան
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Բրյուսովի անվան համալսարան
Անգլերենի ամբիոնի վարիչի ժ/պ

Գ. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ
ԲՊՀ գիտական քարտուղար
22.11.2024